

Հ.ՊԱՐՈՆՅԱՆԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ

Ա.Մ.Աթայան

Հայ նշանավոր գրողներից շատերը եղել են ականավոր մանկավարժներ, որոնք միշտ էլ ուշադրության կենտրոնում են պահել ուսուցման ու դաստիարակության հարցերը:

Հ. Պարոնյանը արևմտահայ այն գրողներից է, որը երկար չի զբաղվել մանկավարժական գործունեությամբ, սակայն ամբողջ կյանքում նրան հուզել է սուլթանական դաժան ուժիմի տակ ձևափորվող հայ անհատը, քաղաքացին, հայկական դպրոցների վիճակը, հայոց լնզի և զրականության ուսուցման առաջավոր սկզբունքները: 19-րդ դարի կեսին, հատկապես Արևմտյան Հայաստանի դպրոցներում պետական միասնական վերահսկողության բացակայությունը հնարավորություն չէր տալիս միասնականություն ու կայուն փիճակ ստեղծելու՝ ուսուցման մեթոդների ու սկզբունքների հարցում: Բազմիցս մեծ երգիծաբանը քննադատել է պատրիարքարանի հսկողությամբ և քնակչության տնտեսական օժանդակությամբ գործող մասնավոր դպրոցները՝ նշելով, որ դրանցում տիրում է դասավանդման սկզբունքների և մեթոդների խառնաշփոթություն: «Զարմանալի էին այն վարժարանները, որոնց մեջ աշակերտ մը յուր գործերուն խելք չհասցուցած, առաջաներու գործերուն փրայոր տնելնկություն կառներ»:<sup>1</sup> Հենց Արշակունյաց վարժարանում սովորելիս Հ. Պարոնյանը հասկացել է, որ կրթական աշխատանքի ամբողջ դեկադրությունը գտնվում էր հոգևորականների կամ կառավարության հետ կապված ամիրաների ձեռքին: Հոգևորականներից նա գնահատել է Պողոս Պատվելիին, աշակերտի իր երախտագիտությունն է արտահայտել նրա հանդեպ. «Մեծ փառ ու պատիվ է ինձի նորին Սրբազնության պես դասատու մը ունեցած ըլլալս», թե՛ն պետ որպես հոգևորականի Պարոնյանը նրան քննադատել է իր «Ազգային ջոշերում»: Արշակունյաց դպրոցը Պարոնյանին եթե իմանավոր գիտելիքներ չի տվել, ապա չի կարելի չգնահատել լեզուների ուսուցման մեջ նրա ունեցած դերը: Թերևս մայրենի իմացությունը փոքր բան չէր այն միջավայրում, ուր հայ ընտանիքներում խոսակցական լեզուն թուրքերենն էր:

Պարոնյանի կյանքը, նրա հրապարակախոսական ու գրական գործունեությունը ուսանելի օրինակ են մեր պատանիների ու երիտասարդների համար:

1870-1871թթ. Հ. Պարոնյանը ուսուցական աշխատանքի է իրավիրվում Ալյուտարի ճեմարանում: Թեպետ քիչ են տեղեկությունները այդ մի տարվա աշխատանքի մասին, սակայն փաստերը վկայում են, որ Պարոնյանը ճեմարանում մտերիմների լայն շրջանակ ուներ, անշափ ուշադիր էր կրթական գործի հանդեպ: «Ծաղիկ» շաբաթաթերթը նշում է. (1904, յիշ 1) «Գնդեցիկ մի սովորություն ուներ ճեմարանական ուսուցիչը. գրպանում պահում էր մի փոքրիկ տետրակ, որտեղ գրի է առել «իր մտքին հետզինեւուն ներկայացած այն զաղափարները, որոնք իրեն ուշագրավ կերևան, օր մը անոնցմեն օգտվելու համար իր գրվածքների մեջ»: «Գրապանի տետրա» վերնագրի տակ Հ. Պարոնյանը խոսում է վարժարանների, մանկապարտեզների դերի մասին: Ոգևորում է մեր ազգայիններին, որոնք «պիտի փութան քաջալերել նաև սույն ճեռնարկությունը»: (Խոսքը Գաղը զյուղի մանկանց պարտեզի մասին է):<sup>2</sup>

Նման փաստերը վկայում են Պարոնյանի հայոց կրթարանների դերի ու նշանակության հանդեպ մտահոգության մասին:

Պարոնյանը դասատուի պաշտոն է փարել Կ. Պոլսի հայտնի կենդրոնական վարժարանում, որտեղ իրենց կրթությունն են ստացել արևմտահայ գրականության, բանափորության աշքի ընկնող դմբեր՝ Հր. Աճայանը, Ա. Չոպանյանը, արձակագիր Մելքոն Կյուրճյանը, բանաստեղծ Թ. Թերզյանը և ուրիշներ: Ալյուտարի ճեմարանից հետո փոխվել էին ժամանակները: Ազգային զգացումները խեղդվում էին դեռ խանձարուրում: Դպրոցում վլստում էին լրտեմները, բոլոր դասագրքերից սրբվել էին ազգ, ազգություն, ազատություն բառերը: Հեռատես ուսուցիչները զգուշավոր էին: Զգուշավոր էր նաև Պարոնյանը: Աճայանն իր հուշերում պատմում է Պարոնյանի մասին, որպես բարի, ազնիվ ուսուցչի, որը ոչ մի աշակերտի «ապակաս թվանշան տալ չգիտեր»: 1889-90թթ. աշխատելով կենդրոնականում, Հ. Պարոնյանը ուսումնասիրներ երեխաների

հոգեբանությունը: Ա. Չոպանյանի վկայությամբ աշակերտներն իրենց դարակներում պահում էին ոչ թե հաշվապահական դասագրքները, այլ «Խիկարի» համարները:

Պարոնյանի աշխատակցած ու հիմնադրած բոլոր պարբերականները լեզուն են առ հայն ու հայկականն ունեցած սիրով: Յուրահատուկ դպրոց էր Պարոնյանի համար «Մեղու» պարբերականը: Պարոնյանի և Սվաճյանի ջերմ հարաբերությունները ուսանելի օրինակ են, վստահության, աշակերտի հանդեպ ունեցած համակրանքի, աշակերտի՝ առ ուսուցիչն ունեցած պատկառանքի լավագույն օրինակ: «Սա յուրահատուկ մի կտակ էր, որով ուսուցիչը աշակերտին էր հանձնում ոչ թե ստվորական մի թերթի խմբագրությունը, այլ մի արդար դատի պաշտպանությունը: Սվաճյանը զիտակցում էր այն լծի ծանրությունը, որ դնում էր համեմատաբար երիտասարդ իր բարեկամի ուսերին, զիտեր, որ դեպի վարդաստան չէր առաջնորդում նրան, այլ միում էր դեպի փշոտ արահետները, որտեղով անցնել անհնար էր առանց վնասվելու», - գրում է Գ. Ստեփանյանը իր «Հակոբ Պարոնյան» աշխատության մեջ:<sup>3</sup>

Գրականագետ Գ. Ստեփանյանի վկայությամբ, մեզ հասել է տպագիր մի վավերապետյալ, որից երևում է, թե ինչպիսի ակնածանրով, հարզանքով է վերաբերվել երգիծաբանը Սվաճյանի նկատմամբ, զանկանալով անգամ հրապարակով հաշվետու լինել նրան: Պարոնյանը շարունակում էր այն պայքարը, որ 15 տարի «Մեղու» էջերից մենակ էր նրա ուսուցիչ Հ. Սվաճյանը: Աշակերտը շատ էր անցել ուսուցչից, բայց զիտակցում էր նրա մեծությունը:

Կարենի է ասել, որ հենց «Մեղու» պարբերականն է ձևավորում Պարոնյանի մեջ սեր մանկական երկի, մանկական ընթերցանության գրքի, դպրոցական ծրագրային դասագրքների հասանալով: «Մեղու» փոքր կտակի գործերը հենդինակի ստեղծագործական աշխատանքի զույգ արդյունքներն են՝ համեմական բազմաթիվ աֆորիզմներով, սեղմ բնութագրումներով: «Թե որ», «Ասկե անկե» վերնագրերը դաստիարակչական հետաքրքիր դպրոց են երեսաների համար: Հենց «Մեղուի» էջերից Պարոնյանի դիրքորոշումն է հնչում՝ չճանձրացնել ընթերցողին, հեռու մնալ տափակ սրամտությունից ու շաղակրատանքից: Պահանջ, որ դրվագ է մանկական գրականության հիմքում:

Պետք է նշել, որ Հ. Պարոնյանը բուն մանկական գրականությամբ չի գրադիմ, հատուկ մանկական երկ չի ստեղծել, սակայն բաղարական նկատառումները նրան տարան դեպի այդ բնագավառը և մանկական երկերի հետ ծնվեցին նաև հայ դպրոցին, ուսուցմանը, մանկական գրականության տեսությանը վերաբերող նրա իմաստուն մտքերը: Մի անգամ չի Պարոնյանը տարբեր արիթմներով քննադատել այն մարդկանց, որոնք ընթերցողներին սնում էին բուվարային անմեղոտներով, հակադաստիարակչական պատմություններով, անմահ ու անիմաստ կատակներով: Բազմից է Պարոնյանը քննադատել վարժարանների այն ծրագրերը, որոնք ոչինչ չին տալիս մասուկ ու երիտասարդ սերնդի դաստիարակությանը: «Պոլոյտ մը Պոլսու թաղերու մեջ» ակնարկաշարում քննադատական բազմաթիվ մտքերի հետ տեսնում ենք նաև Պոլսի ամենահարուստ թաղամասերից 1-ի՝ Միջազգության նկարագրությունը: Հարուստները միլիոններ են ծախսում իրենց զվարճությունների համար, բոլորովին չմտահոգվելով իրենց երեսաների դաստիարակության գործով: «Ճատերը կը զարմանան, թե ասանկ հարուստ թաղի մը վարժարանն ինչու աղքատ մնա: Չե զարմանար: Վարժարանն անոր համար աղքատ է, որովհետու թաղին մեջ հարուստներ կան»: Պարոնյանը կծու ծաղրի է ենթարկել հետադիմական Տերոյենցի կազմած դպրոցական դասագրքներ՝ գտնելով, որ դրանք ստվորողների համար խիստ վտանգավոր ու վնասակար են: Թույլ երկերի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ուներ Պարոնյանը: Մեծ ռեալիստի ժամանակաշրջանում հասարակական չարիք էր այն երևությը, որ ամեն մի գրագետ մարդ փորձում էր բանաստեղծություններ գրել ու տպագրել: Գրում էին երկեր, որոնք ընթերցողի սրտի ու մտքի հետ չին խսում: Բարձրածաշակ Պարոնյանը գտնում էր, որ յուրաքանչյուր երկ պետք է իր նպատակն ունենա: «Բախտին շինած բանաստեղծին պես անձունի բան չկա», - ասել է մեծ երգիծաբանը:

Բազմաթիվ երկերում Պարոնյանը քննադատել է անգլոամերիկյան միսիոնների «կրթադաստիարակչական գործունեությունը, որն ուղղակի քող էր՝ ծածկելու համար իրենց գաղութատիրական դիտավորությունները:

Խոսնելով ուսուցման դասագրքների մասին, Պարոնյանը մեծ պատասխանատվության է կոչում հեղինակներին «Ազգային կրթական խորհուրդն սա սկզբունքն ընդունած է, թե ամեն դասագիրք, որ իրեն կը ներկայացվի քննվելու, օգտակար գտնվելու, ընդունվելու, հաստատվելու և վավերացնելու համար, չկրնար խնամքով պատրաստված չըլլար. ուստի շատ անգամ առանց

քննելու, օժանդակ քննիչ մասնավամբի մը ձեռք քննելն հետո, կը հանձնարարն զանոնք իբրև ընտրելագույն և առաջին յուրաքանչյուրն յուր տեսակին մեջ», - գրում է Պարոնյանը:<sup>4</sup>

Քաջ գիտակցելով մանկական պարբերականի դերը երեսաների ուսուցման ու դաստիարակության պատվավոր գործում՝ Հ. Պարոնյանը վստահ ու հանդուգն քայլով նախաճ ենուող նդավ արևմտահայ «Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթի: Մի ժամանակաշրջանում, երբ հայալեզու շատ թերթեր, պարբերականներ հազիվ էին իրենց գոյությունը պահպանում: Սա ևս քաղաքական վստահ ու անվարան քայլ էր, հայրենասիրական գործունեություն՝ մի բարդ ու հակասական ժամանակաշրջանում: Արևմտահայերի համար կենսական հարց էր ազգային պատագրությունը: Կենսական կարևորագույն պահանջ էր նաև հայեցի դաստիարակությունն ու կրթությունը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ օտարերկրյա գաղութաբարարներին լիստ ձեռնտու էր իրենց ձեռքը վերցնելու հայ երեսաների դաստիարակությունը, որպեսզի նրանց մեջ արմատավորեն հնազանդությունը, կամազրկությունը, հեռու պահեն ըմբռատ ու ազգապահպան քայլերից:

Պոլտում տպագրվում էր «Ավետարեն տղայոց» պարբերականը՝ ամերիկյան միսիոներների միջոցներով: «Ավետարենը» հայ իրականության հետ կապված ոչ մի նյութ չէր տպագրում, չէր անդրադառնում հայոց պատմությանը, որն այնքան անհրաժեշտ էր հայեցի դաստիարակության համար: Մինչեւ հայ մանկական գրականության զարգացումն անհնարին էր առանց մանկական պարբերականի: Պարոնյանը լսմբագրում էր «Թատրոն» թերթը, որի համար արտոնություն ուներ: Որպեսզի նորից չխնդրեր արտոնությունը, որը դյուրին չէր, Պարոնյանը հիմնադրեց «Թատրոն մանկանց» երկշաբաթաթերթը, որի հիմնական նպատակը հայ մանուկների դաստիարակությունն էր: Ուրիմն մանկական պարբերականի հիմնադրման պատիկը պատկանում է Պարոնյանին, որը 1876թ.հունվարից մինչև 1978թ. կեները «Վարար պահեց» թերթի ակունքները: Այն նախատեսված էր կրտսեր դպրոցահասակ տարիքի երեսաների համար:

«Դեռահաս տղայոց դաստիարակության համար» նախատեսված հանդեսի առաջաբանում նշում է նրա առաջնահերթ նպատակը, որը մայրենի լեզու ստվորեցնելն է, ապա՝ քաղաքացի և լավ մարդ դաստիարակելը: Պարոնյանը նշում է, որ թերթի միջոցով ցանկանում է փորձնի համար գրական ծաղկոց մը հիմնել «և աստ կրկնել հանապազ այն բարոյական և կրթական դասեր՝ որով միայն կարելի է պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի ըլլալ»: Մեծ տեղ տալով հայերենի ուսուցմանը Պարոնյանը փորձում է հնարավոր բոլոր միջոցներով, մանկական տարրեր ժանրերի երեսաներով երեսաներին հայերեն ստվորեցնել, որն է՝ հայեցի դաստիարակության Ի պայմանը.

«Ձեր մեջ, - գրում է Պարոնյանը, կան շատերը, որ գիտուն տղու մը չվայելիք բառն կգործածեն, անոնց հայերենը չզիտնալով... Թատրոնին մեջ ևս ամեն մեկին առջև հայերենը պիտի դնեմ՝ որ դուք աշխատելով ստրվիք և պետք նեղած ատենը սխալ բառ չգործածեր»:

«Թատրոն մանկանց» մի յուրօրինակ «Նախաշավիդ» է, որի գեղարվեստական նյութերը 3 խմբի են դասվում: Կան արձակ երկներ՝ պատմվածքներ, առակներ, հերիադեններ, զանազան նյութերի մշակումներ: Զափածու երկերից՝ ատանավորներ, առակներ, հանդուկներ:

Թերթում կան նաև ֆրանսերենից կատարված բարձրարվեստ փոխադրություններ ու թարգմանություններ: Մեծ տեղ տալով բանահյուսական նյութերին, Պարոնյանը զտնում է, որ «բարոյալից առակներ կամ առասպելներ ալ պիտի դնենք, ինչպես նաև հանելուկներ՝ լուծողներուն մրցանակները խոստանալով»: Մեր դասական մանկագիրներից շատերն են մատնանշել հանելուկի ուսուցման դերը երեսայի խոսքի, շրջապատի աշխարհի ճանաչողության, տրամարանության զարգացման գործում: Այն կարևոր ժամանակ է նաև՝ հեռու պահենլու երեսային յուրաքանչյուր հոդի, հակամարդկային արարքներից ու գրադմունքից:

«Թատրոն բարեկամ մանկանց» թերթը ուներ գեղեցիկ նկարագրդում, որը ևս մանկական գրականությանը ներկայացվող պահանջներից է: Ենքուն պարզ էր ու պատկերավոր, խիստ հարազատ կրտսեր տարիքի երեսաների մտածողությանն ու ունակություններին:

Մեծ երգիծաբանը զարմանալիորեն երեսայի հետ խոսում է զգույշ ու մեղմ, նրբազգաց է, հոգով ու սրտով կապված էներեսաների հետ: Մեր նշանավոր մանկավարժները խաղը միշտ համարել են երեսայի գործունեության կարևոր բաղադրամասը: Հ. Թումանյանը զտնում էր, որ խաղը նորմա է երեսայի կյանքում: Նա ամեն ինչի խաղով է մոտենում, խաղով է ճանաչում

շրջապատը: «Ծատ դասեր պիտի տամ ձեզի... աղվոր պատմություններ պիտի պատմեմ, խաղնը պիտի սորվեցուննմ, հանելուկներ պիտի ըսեմ ձեզի, որ լուծեր», - գրում է Պարոնյանը:

Մեծ գրողը խորհուրդ է տալիս երեխաներին՝ սիրով պահել թատրոնի համարները, որովհետո ամբողջ տարվա մեջ օգտակար նյութեր նրանք շատ կցտնեն այնտեղ:

«Եվ այս ամեն բաններ աղեկ հասկցնելու համար՝ գեղեցիկ պատկերներ ալ պիտի դնեմ այս «թատրոնին» մեջ, անոր համար՝ չըլլա որ այս լրագիրը պատռունք կարդալին նորը, հապա՝ պահեցներ, ինտոր որ ձեր խաղալիքը կը պահեմ, զալ անզամ նոր «Թատրոն» մըն ալ պիտի խրկնմ ձեզի, ասոր բովը դրեմ և իրարու կարեցեք. ասանկ ամեն անզամ մեյ-մեկ նոր «Թատրոն» առնելով՝ մեկ տարվան մեջ խոշոր գիրք մը ունեցած կըլլաք»...<sup>5</sup>

«Թատրոն մանկանցը» նաև բարոյական դաստիարակության լավագույն միջոց է: Ինչու հայ երեխան չիմանա վարվելակերպի ընդունված ու պատշաճ ձևերը, ինչպես ընդունել ու ճանապարհել եյուրին, ինչպես հեռու մնա օտար բարբերից: Թերթի դերը մեծ է նաև երեխաների՝ արհեստներիմեջ կողմնորոշվելու հարցում «Մանչերուն համար արհեստներուն պատմությունը պիտի ըննմ, որ երբ որ մեծնան՝ իրենց ուզած արհեստն ընտրեն...», - գրում է Պարոնյանը:

Աբրվյանի «Նախաշավիդի» նման «Թատրոն» ընդգրկում է գործնական բնույթի հորվածներ, որոնց կրթական, ճանաչողական ու դաստիարակչական դերն անշափ մեծ է: «Թատրոն մանկանցի» էջերում հանդիպում ենք աշխարհագրական, բնագիտական, պատմական բնույթի ստեղծագործություններ, նկարներ, որոնք պատկերացում են տալիս քաղաքների, բուսական ու կենդանական աշխարհների մասին: Դարձալ քաղաքական նկատառումներով Պարոնյանը երեխաներին ծանոթացնում է Պոլսի բնակչության, նրանց ազգային պատկանելության, պանդուստների կյանքի հետ՝ ցույց տալով, որ պատղստությունը չարիք է և որ պետք է խղճալ նրանց, լինել բարեկույթ:

Մասին սարն ու Հայաստան աշխարհը սրբության սրբոց պիտի լինեն հայ մանկան համար:

Թերևս դրան են նվիրված հանդեսի գեղեցիկ նկարները: «Մասիսն ավելի ինչ կա մեծ, վանմ և հիանալի, որ այնքան փառավորություն ունեցած ըլլա հիշատակությանց մեջ», - գրում է Պարոնյանը: Քանի որ Պարոնյանի հիմնական նպատակը հայեցի դաստիարակությունն է, թերթը իր համարներում գնտենել է ուսումնական նյութեր՝ թե կրթական, թե ճանաչողական ու դաստիարակչական:

Թերթի բարոյական խրատները նաև հայրենասիրության դաստիարակության լավագույն դպրոց են, նյութեր, որոնք փոքր հասակից մարդու կյանքը դարձնում են գեղեցիկ, սովորեցնում են գեղեցիկ ու վեհորեն ապրելու արվեստը:

«Որ ազգին ալ որ ըլլաս, ինչ վիճակի մեջ ալ որ գտնվիս, դու պահապան գինվոր մըն ես հայրենիքի, նա ալ իրավունք ունի քո գիտությանդ, առարինությանդ, զգացմանդ, բոլոր գործերուդ արդյունքը վայելելու:-, գրում է Պարոնյանը, - Զինվոր ես, հայրենիքդ ծառայել մտածե, արհեստավոր՝ ճարտասանությունդ քանեցուր հայրենիքիդ զարգացման համար, գիտուն, հայրենիքիդ օգուտը խորին և ուրիշին սովորեցուր»:

Պատմական, հայրենասիրական նյութերը շատ են թերթի էջերում («Առ հայրենիք», «Մեծ Սերսն կաթողիկոս և Պատ թագավիր», «Արամ Հայկազյան» և այլն):

Կյանքը ռեալիստական գույներով ներկայացնելը պարոնյանական արվեստի մնայուն արժանիքն է նաև մանկական երկերում: «Պղտիկ պատմություններ» շարքը ամբողջովին մարդասիրության ու անձնազոհության օրինակ է: Թերթի էջերում Պարոնյանը ամեն կերպ շանում է լուսավորության, կրթության հարգը զգացնել տալ երեխային, քանի որ օսմանյան կառավարությունը ամեն կերպ խնդրում էր յուրաքանչյուր լուսավոր միտք: Պարոնյանը թերթի էջերում իրեն հատուկ հումորով ու երգիծանքով քննադատում է ծուլությունը, դրվագում գիտելիքը, փորձում է հայ մանկանը հեռու պահել մոլորություններից: «Բարոյական դասերի» տակ Պարոնյանն արտահայտում է իր հոգերանական ու մանկավարժական մոտեցումները քաղաքաբարության, առարինության նկատմամբ: «Քաղաքավարությունն ալ ուրիշ առարինությանց պես իր ծայրերն ունի: Թերթական կամ քննումը ալ կրպտության պես անհաճոյ է: Ստույգ քաղաքավարությունն այն է, որ թե քննելն ու նվասութեննեն և թե լրբութենի ու անտարբերութեննեն հետի՝ համեստաքար դիմացինին հաճելի կըլլայ»: Ուսուցման որոշակի մեթոդներ է առաջարկում Պարոնյանը՝ իր թերթում գնտենելով հարց ու պատասխանի ձևով գրված երկն՝ որպես նյութի մատուցման ակտիվացնող մեթոդ: Թեմաները շատ են – ընտանիք,

դպրոց, շրջապատ, գույնեղ, ձևեր: Սյուժեները պարզ են, հակիրճ, որը ևս մանկական գրականությանը ներկայացվող պահանջներից է:

Բոլոր նյութերը համեմված են առած-ասացվածքներով, թևավոր խոսքներով, դիպոլ ու սրամիտ դարձվածքներով, ինչը հեշտոնկալ է դարձնում երկը, իսկ զվարճալի բովանդակությունը իրականացնում է «ուրախ զիրք մանուկներին» պահանջը:

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Պարոնյանը կյանքի վերջին տարիներին էլ խորհեն է դաստիարակության, կրթության հարցների շուրջ: Իր նամակներից մեկում նա տարակարծիք է եղել Գր. Զոհրապին (1890թ., դեկտ.): Դեմ էր, որ հայկական դպրոցները եվրոպական դպրոցների ծրագիրը անքննադատ օգտագործելով անտեսում են տեղական պահանջները, Թուրքիայի պայմանները և պատճառ դառնում երեխաների դժբախտության, «Մենք անոնց ծրագրով բարի քաղաքացի կը լավանք կոր, և հետո անոթութեննե բարի քաղաքացիություննիս ալ կերթա կոր: Կրնամ այսօր 2-3000 պատանիներ գույց տալ, որոնք անոթի են, պապամ, ասոնց մեջը կը գտնվին Եվրոպային եկած քժիշկներ, երկրաշափներ, երկրագործներ, փաստաբաններ և այլն: Ամեն բոյս ամեն տեղ միևնույն եղանակով չի մշակվիր:»

Մարմնամարզություն կը սորվեցներ, որպեսզի մարմինն առողջ ըլլա, չի կրցինք հասկցնել, որ մարմինը անոթի է:

...Նախ ապրեցնեք, հետո հոգին և այլն կրթենք»:

Բազմաթիվ են Հ. Պարոնյանի մտքները հայ դպրոցի, մանկավարժության, դաստիարակության հարցների մասին: Այսպես. «Առանց կարգապահության դպրոցը կը նմանի ջուր չունեցող ջրաղացի»:

Պարոնյանը մեծ սիրով է խոսել հայ ուսուցչի մասին, սրտի ցավով նշել նրա նյութական ծանր վիճակը. «Ամենափոքք դասասոու մը ամենամեծ հարուստեն ավելի, շատ ավելի կը ծառայե ազգին և անոր համար ավելի պատփու և հարզանաց արժանի է. անոնց արժանապատվությանը կը դպչի կոր հասկնալը, թե դասատուները ազգին ծառաները չեն, այլ տերերն են»<sup>7</sup>, - գրում է Պարոնյանը:

Հակոբ Պարոնյանի մանկավարժական հայացքները նպաստել են հայ դպրոցի զարգացմանը: Նրա ստեղծագործությունները գետնովել են մեր դասագրքերում՝ 20-ական թվ. Սուրևատյանի «Գրական գոհարներ» գրքում, 30-ական թվ.-ի ծրագրերում, 1933թ. Չարենցի կազմած 7-րդ դասարանի լեզվի և գրականության դասագրքում: 30-ական թվականների քրեստումատիաներում:

Պարոնյանի մանկական գրականությանը վերաբերող տեսական ու գործնական հարցները միշտ էլ եղել են մեր նշանափոք տեսաբանների ուշադրության կենտրոնում: Անուրանալի է Պարոնյանի ծառայությունները մանկական գրականության տեսության բնագավառում: Մանկական երկի նկատմամբ մեծ պահանջկոտությունը (հակիրճ, հստակ, ճոխ լեզու, կուռ կառուցվածք, ռենալիզմ, զգացումնայնություն, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, բարյական ու գեղագիտական դաստիարակություն և այլն): Մեծ է նրա դերը նաև մանկական գեղարվեստական խոսքի և ժանրերի զարգացման ուղղությամբ: Մանկական մանրապատումները նոր ժանր են արևմտահայ մանկական գրականության մեջ: Պարոնյանն այդ ժանրով ևս դաստիարակեց կատարյալ մարդ լինելու արվեստը՝ հետաքրքրաշարժությունն ու մատշելիությունը դարձնելով մանկական ժանրերի կարևորագույն պահանջը:

Բոլոր երկերում էլ Պարոնյանն իր համակրությունների ու հակակրությունների մեջ որոշակի է, հստակ:

Թե իր երգիծական երկերում, թե դրամաներում ու թե մանկական երկերում Պարոնյանն ունեցել է բարձր հոգի, անափ սեր դեպի ազգն ու ժողովուրդը, որովհետև առաջնորդվել է «Պարզությունն ու ճշմարտությունը այնպիսի գեղեցկություններ են, որ ամեն բանի մեջ կփնտրվին ամեն բանէ առաջ» սկզբունքով:

1. Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Երևան, էջ 422:
2. Հ. Պարոնյան, հ. 10, 1979թ., էջ 640:
3. Գ. Ստեփանյան, Հ. Պարոնյան, Երևան, 1964, էջ 38:
4. Հ. Պարոնյան, հ. 10, 1979թ., էջ 442:
5. «Թատրոն բարեկամ մանկանց», 1876թ., թիվ 1:
6. Հ. Պարոնյան, հ. 10, 1979թ., էջ 642:
7. Նոյն տեղում, էջ 192:

Паронян как педагог и теоретик детской литературы.

**А.М.Атаян**

*Резюме*

В статье отмечается, что великий армянский сатирик и драматург Паронян особо не занимался детской литературой, но политические тенденции привели его к этой сфере и вместе с детскими произведениями родились мудрые мысли, касающиеся армянской школы, обучения, теории детской литературы.

Сознавая роль детской периодики в деле обучения и воспитания детей, А.Паронян стал инициатором западноармянской периодики «Татрон барекам манканц».

Непереводима роль А. Пароняна в развитии детской художественной речи и жанров.

Paronyan as a pedagogue and an ideologist of children literature.

**A.M.Atayan**

*Summary*

The article states that, Hagob Paronyan, the great Armenian satirist has never particularly dealt with the children's literature.

However political considerations brought him to that sphere and soon he wrote children's novels as well as some wise works concerning the Armenian school, teachory and the theory of children's literature.

Realizing the significance of the children's magazines in teaching and bringing up of children H.Paronyan initiated the publishing of "Tadron barekam mankants"(tr-d as "Theatre-the friend of children").

It's impossible to revalue the role of H.Paronyan in the development of the genres and works of the children's literature.